



ԲԱԳՐԱՏ ՈՒՂՈՒԲԱԲՅԱՆ

ԾԱՐԵՑԻ ԻԾԽԱՆԱԶՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԲԱՏ ԵՎ ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

ԺԲ դարի վերջում և ԺԳ-ի առաջին քառորդում Հյուսիս-արևելյան Հայաստանի կյանքը նշանավորվեց քաղաքական, տնտեսական ու մշակութային պայթյիսի վերելքով, որը երազանք պիտի մնար հետագա հինգ-վեց հարյուրամյակների համար: Զաքարյան իշխանապետների դարն էր դա, արգասիքը ներքին ու արտաքին պլանում խոհեմ քաղաքականության, որ վարում էին վրաց-հայկական զինական ու պետական դաշինքի հեղինակները: Նրանց կազմակերպող ջանքերի շնորհիվ վերացավ սելջուկ թուրքերի տիրապետությունը, և դրվեց երկրի տնտեսական ու մշակութային բարգավաճման կայուն հիմքը:

Իրենց քաղաքական բեմելից սկսած՝ Զաքարյան գորապետներն ամեն կերպ ջանում էին ամրապնդել ու մեկ դրոշի տակ պահել հայ ապստակական տները: Նրանց եռանդուն օժանդակությամբ ոտքի կանգնեցին այդ տներից շատերը, որ պիտի հանգչեին իրենց վաղեմի փառքի բեկորների վրա: Այս ժամանակ Արցախ-Խաչենի Առանձաֆիկ իշխանությունը բաժանված էր արդեն երեք ճյուղի: Նրանցից յուրաքանչյուրն իր կշիռն ուներ տվյալ շրջանի համահայկական կյանքում: Եվ պատահական չէր Զաքարյանների մտահոգությունը՝ երեքին էլ պահելու կազմավորվող զինական ու քաղաքական մոտ միավորի մեջ: Նման պարագայում սովորաբար ամենահուսալի միջոց էր համարվում արեւակցական կապը: Խաչենի իշխանաց իշխան և Հաթերքի տեր Վախտանգը նրանց արյունակից էր գալիս. եթե Մահկանաբերդի տեր ու Տփղիսի ամիրա Քուրդի քույրը Սարգիս ամիրապետալար Զաքարյանի կինն էր (Զաքարեի ու

Իվանեի մայրը), ապա նույն Քուրդի դուստր Արգու-խաթունն էլ կնության էր տրված Հաթերքի տեր Վախտանգին: Սարգիս ամիրապետալարն իր դուստրերից երկուսին էլ հարս տվեց Խաչեն (Դոփը՝ Ծարի կամ Վերին Խաչենի տեր Հասանին, Խորի-շահը՝ Ներքին Խաչենի տեր Վախտանգին), և խնամությունը դարձավ նրանց դաշինքն առավել ամրապնդող գործոն:

Զաքարյանների հովանավորությամբ և հատկապես Դոփի կազմակերպչական արժանիքների շնորհիվ բավականին հզորացավ Ծարի իշխանությունը: Բարեկարգվեցին հոգևոր կենտրոնները, ծաղկեց մշակույթը: Ծարի տարածքում աճած գործիչներից ոմանք երբեմն տոն էին տալիս հարևան գավառների հոգևոր կյանքին: Այս տեսակետից ուշադրության արժանի են ծարեցի իշխանագլուխ հոգևորականները, որոնց գործունեության շառավիղները հաճախ հասնում էին Հաղբատ ու Սանահին:

Ներկա հոդվածը մի փորձ է վեր հանելու նշված ժամանակի ծարեցի հոգևոր գործիչներից երեքի կյանքը: Նրանք տոհմակիցներ էին, միմյանց հաջորդող սերունդների ներկայացուցիչներ, կրում էին նույն Հովհաննես անունը և ճակատագրի հետաքրքիր դասավորությամբ անցել են կյանքի ու պաշտոնական վերելքի նույն ուղին: Վերջին պատճառով էլ նրանք ինչ-որ չափով կրկնել են իրար, բայց և կատարել են ինքնատիպ ու հիշատակության արժանի շատ այնպիսի գործեր, որոնք նրանցից յուրաքանչյուրին առանձնացնում են և դասում մեր միջնադարյան մշակույթի երախտավորների շարքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ԽԱՉԵՆԵԾԻ

Միջնադարի մղձավանջում, սելջուկ թուրքերի տիրապետության մուսլ ժամանակաշրջանում և ապա նրանց տիրապետության վերացումից շուրջ կես դար հետո եկած թաթար-մոնղոլների բնաջնջող հուպի դեմ կանգուն մնալու համար ժողովրդին պետք էր միմե այդ շեղած ու չտեսնված մի լարում: Ամիրաթեշտ էր օգտվել ամենամանջան, համարյա բնացող հնարավորությունից և վերականգնել կործանվածը, ստեղծել նորն ու ամկործանելին: Այլապես ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր գոյատևումն իբրև հարց էլ կվերանար: Այս պայմաններում ժողովրդի ստեղծագործական ուժերին ուղղություն տալու հարց էլ կվերանար: Այս պայմաններում ժողովրդի ուղեւոր մարդիկ էին պետք, մեծ կազմավորվող ուղեւոր մարդիկ էին պետք, ելնում էին կերպիչներ: Եվ ծնվում, ժողովրդի ծոցից ելնում էին նրանք: Մեկը վաճառ ու ամրոց էր կառուցում: Մյուսը դպրոցներ էր հիմնում, ժողովում հոգևոր մշակույթի նշխարները: Երրորդը վերականգնում էր ապաստանիչների սմբակների տակ հողին հավասարված շենքերն ու այգեստանները: Լինում էր և աղակիսին, որ գերմարդկային ուժով իր մեջ այս բոլորն էր հաշտարում, դառնում ժողովրդի արարչական ուժի խորհրդանիշ:

Ահա այդպիսի մեկը, եռանդաշատ ու անհամբախտ մի հոգևորական, որի երկարատև կյանքը շուրջ ութ հարյուր տարի հետո մեզ է ներկայանում որպես ստեղծարար նկիրմի մի գեղեցիկ օրինակ: Վիճակն արձանագրություններում նա իրեն կոչում է «Յովհաննես Խաչենցի», ուրիշները՝ «Յովհաննես ի գաւառէն Խաչենցոյ»: Այս կից անունները նրան ու իր հայրենակիցներին էին կոչում հայրենի Խաչենցի դուրս, սովալ դեպքում՝ Հաղթատ ու Սամահին վանքերում, ուր հոգևոր բարձր պաշտոններ էին վարում, կամ Բաղաջ Կապանում, ուր թագավորական գահն էին տնօրինում Խաչենի իշխանության պալատները:

Արցախի (տեմապոյն Խաչենի) Առանձափիկ իշխանական տունը բազմաթիվ ճյուղեր էր արձակել: Սրանք իրավական ու նյութական տարբեր մակարդակների վրա էին գտնվում, չնայած իշխանական տիրույթն անբաժան էր յուրաքանչյուրից: Իշխանագլուխներն աստիճանաբար տրոհվում էին տարբեր ուստիների տիրապետության իրենց տարբեր բնագավառներում ու միանգամայն տարբեր ճակատագրերով: Եվ սա արդյունք էր հին դարերից եկող ավատական ավանդների, որոնց համաձայն իշխանական տան ավագ արու գավակն էր հանդիսանում հոր փոխանորդն ու իշխանության աթոռակալը: Մյուսները, ճիշտ է, օժտված էին իշխանական իրավունքով, ունեին իրենց բաժին ժառանգություն-հայրենիքը, սակայն պարտավոր էին գրադվել իշխանության պաշտպանության գործով, այլ խոսքով՝ երկրամասի գորավարներն էին հանդիսանում:

Խաչենի իշխանությունը, հայ ավատական այս անբեկանելի կարգը պահպանելով հանդերձ, մեզ է ներկայանում իր նաև մի այլ, համարյա անխախտ սովորությունով: Այստեղ երկրամասի հոգևոր իշխանությունը ևս իշխանական տան ժառանգական իրա-

վունքն էր: Հետևապես իշխանի արու գավակներից մեկը (հաճախ նույնիսկ երկուսը) պետք է կուսակրոնության տրվեր, որպեսզի իրավունք ունենար ժառանգելու գավառի հոգևոր առաջնորդությունը: Կուսակրոն իշխանագլուխները Խաչենում տարբերակված էին. երեք ճյուղերից ամեն մեկն ուներ իրեն հատուկ հոգևորական անունը: Ծարեցիները Հովհաննես էին կոչվում, հաթերքցիները՝ Գրիգոր, խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի տերերը՝ և՛ Հովհաննես, և՛ Գրիգոր:

Եկեղեցական թեմերի վրա եղած ժառանգական իրավունքն ինքնին հզոր խթան էր հոգևոր կենտրոնների բարգավաճման համար: Իշխանական տան ժառանգությունն ու տոհմական տապալանատունը հանդիսացող վանքերը, նույն այդ իշխանական տան նյութական ու բարոյական բազմակողմանի օժանդակությամբ, ստեղծում էին իրենց առաջնակարգ դարանոցները, մատենադարաններն ու գրչական արհեստանոցները: Այսպիսով, վանքերը կատարում էին գավառների մշակութային կենտրոնների իրենց դերը և, աչսորվա խոսքով ասած, ստեղծում կարդեր ոչ միայն նույն վանքերի, այլև հարևան եկեղեցիների ու բնակավայրերի հոգևոր կյանքի բնականոն ընդացքն ապահովելու համար:

Խաչենի հոգևոր կենտրոններում կրթություն ու դաստիարակություն ստացած եկեղեցական գործիչները բարձր համարում ունեին Արևելյան Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Բաղական է հիշել թեկուզ ԺԲ դարի այնպիսի ականավոր վարդապետների, ինչպիսիք էին Գրիգոր Տուտեղոյին ու Հաղթատի եպիսկոպոս Բարսեղը¹, Հովհաննես Վանականն ու Վարդան Արևելցին, ծարեցի Հովհաննես անունով եպիսկոպոսներն ու հաթերքցի Գրիգորները և շատ ու շատ ուրիշներ, որոնք իրենց կյանքն անմնացողով նվիրեցին հայ մշակութային գործի կազմակերպմանն ու առաջընթացին:

Ծարեցի մեզ հայտնի առաջին Հովհաննեսը Դոփի ամուսին Հասանի եղբայրն է, մի եռանդաշատ հոգևորական, որի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են մատենագրական ու վիճակի բազմաթիվ նյութեր: Խաչենի իշխանական (Առանձափիկ) տոհմի պալատում էր նա, ծնված ու մեծացած փառավոր նախնիների օրրանում՝ վերին Խաչենի լեռնաստանում: Հենց այստեղ էլ, մոտավորապես ԺԲ դարի կեսերին ստացել էր իր կրթությունն ու դաստիարակությունը և նույն դարի 80-ականների սկզբին արդեն հասուն այդ էր և Սամահի վանքի առաջնորդը:

Կենսագրական հարուստ ու արժանահավատ նյու-

¹ 1172 թ. Հաղթատում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում «տեսան Բարադի արհիեպիսկոպոսի» մասին գրված է. «...շատ կանխակատ գիտություն վերնոյ դիտման» եկեալ ի գաւառէն Խաչենոյ, եղև... վերատեսուչ համայն քրիստոնէից Հայոց, որ ընդ գաւազանաւ թագաւորութեանս Վրաց» (Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, Ա, Ամբիլիս, 1951, էջ 408):

թերով գծվում է Հովհաննես Ա-ի ապրած կյանքի երկար ու քննամալոր կյանքի տարեգրությունը՝ Սահմանի առաջնորդությունից մինչև Հաղթաստվածը գնալը, այնտեղից հայրենի Խաչեն վերադառնալը և, վերջապես, շուրջ քսանամյա առաջնորդությունը Հաղթաստի վանքում, ուր նա, հոգևոր իր խնդիրները հրաշալի կատարելուց բացի, ծավալեց շինարարական մի այնպիսի գործունեություն, որի արգասիքներն այսօր էլ մեզ են ներկայացնում իբրև մույն դարի հայ ճարտարապետական արվեստի լավագույն կոթողներ:

Կիրակոս Գանձակեցին Հովհաննես Ա-ի կյանքի ու գործի մասին տարբեր աղբյուրներով խոսելիս հիշում է և նրա մի խոշոր ծառայությունը, որի համար միայն արժեր, որ երախտագետ սերունդները չմոռանային նրան: Այս Հովհաննեսն է եղել Սարգիս ամիրսպասալարի երկու որդիների՝ Զաքարիեի ու Իվանեի դաստիարակը («Սնուցող անոցն իշխանացն»)²: Երկու մեծ գորապետները ԺԲ դարի վերջին և ԺԳ-ի սկզբին Մայր Հայաստանին գորավիզ եղան օտար բռնակալների դեմ պայքարելիս և գլխավորեցին հայրենի երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքը: Նրանց խոհեմ քաղաքականությամբ էր, որ հայ ու վրացի ժողովուրդների ուժերը միավորվեցին՝ մեծապես խթանելով երկուսի առաջընթացին: Չի կարելի այս գորապետների կենսագրության մեջ չտեսնել ու չգնահատել այն սքանչելի սերմերը, որ այնպես հմտորեն նրանց հոգու մեջ էր ձգել Հովհաննես ուսուցիչը: Եվ հենց այն հանգամանքը, որ Զաքարեն իր քրոջ որդի (Հովհաննես Ա-ի եղբայր Հասանի տղա) Գրիգորին Հաղթաստի առաջնորդությունից հեռացնելուց անմիջապես հետո հենց իր ուսուցիչ ու դաստիարակ Հովհաննեսին նշանակեց Արևելյան Հայաստանի ամենախոշոր թեմի առաջնորդը, վկայում է այդ օրերի Հայաստանի գերագույն իշխանապետի երախտագիտությունը Հովհաննեսի նկատմամբ:

Հովհաննես Ա-ի մասին պահպանված առաջին հիշատակությունը ԺԲ դարի 70-ական թվականների վերջից է: Այստեղ նրա անունը կապվում է հայոց ազգային հոգևոր ավանդների պահպանման համար մղվող պայքարի և առանձնապես շինարարական-նորոգչական գործի հետ:

Նա մեկն էր Հյուսիս-արևելյան Հայաստանի հոգեվոր այն առաջնորդներից, որոնք ԺԲ դարի 70—80-ականներին համատ պայքար էին մղում քյուզանդական թագավորի ու եկեղեցու՝ հայոց հավատի վրա կատարած ոտնձգությունների դեմ: 1178 թ. Գրիգոր Տուտեղոյ, Դավիթ Քոբայրեցու և մյուսների հետ Հովհաննեսն ստորագրեց այն մասնակերպին, որոնցով հյուսիս-արևելյան նահանգների վարդապետները մերկացնում էին քյուզանդական քաղաքակրթության՝ բարեկամական առաջարկներով քողարկված չար մարտակները և Գրիգոր Տղա

կաթողիկոսին զգուշացնում էին չգայթակրվել կեղծ բարեկամության առաջարկներով:

Ապա մեկը մյուսի ետևից վիժական արձանագրություններն են խոսում Հովհաննեսի մասին: Մի տեղ նա այգի է տնկում «մեծաւ աշխատութեամբ», և իր եղբորորդի վարդապետ Գրիգորն էլ այգին նորոգում, խաչ է կանգնեցնում³: Մի այլ արձանագրությամբ նրա շինարարական գործն է հիշատակվում:

Հովհաննեսի առաջնորդությամբ 1181 թ. կառուցվեցին Սահմանի վանքի Ամենափրկիչ եկեղեցին ու նրա գավիթը, ճարտարապետական մի հույժ կարեվոր ձևումով, որի իրականացումն էր ինքը՝ Հովհաննեսը, «ազնականութեամբ ամիր Բորդին և վարդապետի մեծի Գրիգորի» (Տուտեղոյի Խաչենեցու)⁴:

Երեք տարի հետո Տուտեղոյին իր հայտնի խաչարձանի վրա հիշատակագրել է վանքի կաթողիկեի նորոգումը Հովհաննեսի առաջնորդությամբ⁵: Հով-

³ **Յովհաննես Ղրիմեցի**, Պատմություն հուշակառու վանքից Հաղթաստայ ա. Նշանին, Վիեննա, 1865, էջ 150, **Ս. Զալպեանց**, Ծանադարհորդությունից ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 80:

Ինչպես Ղրիմեցու, այնպես էլ Զալպեանցի մոտ արձանագրության Հովհաննեսի բաժնում թվական է նշանակված Ռ—1251, որ թյուրիմացություն է: Արդեն պրոֆ. Կ. Ղաֆադարյանն է նկատել, որ այստեղ պարզապես գրի չեն առնվել «տաճարների և միավորի գրերը» (Կ. Ղաֆադարյան, Սահմանի վանքը և նրա արձանագրությունները, Ե, 1957, էջ 188): Սակայն իրավացի չէ գիտնականը, երբ այս և 1181 թ. արձանագրությունների մեջ վանքի առաջնորդ հիշված Հովհաննեսին տարբեր է համարում Հովհաննես Խաչենեցուց և «քուերորդի պատմությանց» Գրիգորին էլ մույնացնում Տուտեղոյու հետ (Սահմանին, էջ 51):

⁴ **Ղաֆադարյան**, Սահմանին, էջ 104: Մույն արձանագրության՝ Սահմանի Քոթուկում գրանցված տարբերակի մեջ «վարդապետի մեծի Գրիգորի»-ի փխ. «վարդապետի մեծի թագաւորին» է (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 3032, էջ 70), որ գրչական սխալ պիտի համարել:

⁵ Տուտեղոյու խաչարձանի գիրն է. «...Կանգնեցաւ ի հայրութեան Յովհաննիսի, լորում ամի նորոգեցաւ կաթողիկէս ար. ի թու. ՈԼԳ» (1184) (**Ղաֆադարյան**, Սահմանին, էջ 180): Այստեղ և այլուր առաջնորդ է միայն Հովհաննեսը, և չի հաստատվում նրա այն աթոռակցությունը Տուտեղոյու հետ, որի մասին Կ. Ղաֆադարյանն է գրում իր գրքի 53-րդ ու 195-րդ էջերում: Տուտեղոյին առաջնորդ է հիշված միայն 1183 թ. արձանագրությամբ (**Ղաֆադարյան**, Սահմանին, էջ 189), որ նշանակում է՝ նա կարճ ժամանակով առաջնորդ է եղել Հովհաննեսի ընդմիջումին: Ուղղելի է նաև Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությունը, որի համաձայն՝ իբր թե Հովհաննեսը Սահմանի առաջնորդ է դարձել «զկնի մահուան Գրիգորոյ, գոր Տուտայ որդին կոչէին» (**Կիրակոս**, էջ 171): Մինչդեռ վերը վկայակոչված

² **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 171:

համեմատելով Սամահի առաջնորդ է հիշվում նաև հե-
տագայի մի շարք արձանագրություններում, մինչև
1191 թ.⁶։ Նկատի առնելով, որ 1195 թ. ընդօրին-
ակված մի ձեռագրի հիշատակարանում Հովհան-
նեսն արդեն Հաղթատավանքի առաջնորդն է⁷, պետք
ենթադրել, որ նա Հաղթատ է տեղափոխվել 1191 և
1195 թթ. միջև։ 1198-ին տեղի ունեցավ Մխիթար
Գոշի համար կառուցված Նոր Գետիկի վանքի նա-
վակառույթը։ Ըստ Կիրակոսի վկայության՝ «Անդ էր
և եպիսկոպոսն Հաղթատայ Յովհաննես, առաքինի
և սուրբ այր»⁸։

1198 թ. մի արձանագրության համաձայն Հով-
հաննեսը դեռևս եպիսկոպոս էր Հաղթատում։ Ինքն
այդի էր գցել Սևորոյաց ձորում, մի խաչքարի վրա
արձանագրել այդ մասին։ Նրա գրի տակ էլ վանքի
վարդապետ Գրիգորը թողեց իր արձանագրությու-
նը. «Ի ՈՒԷ—(1198) թվին ես՝ Գրիգոր վարդապետ
քուերորդի պատրուհացն, մոր շինեցի զայգիս և
կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովհան-
նեսի վանս յիշատակի անցս և ինձ»⁹։

Այսքանից հետո է, որ Հաղթատի առաջնորդ Հով-
հաննեսը, ըստ Կիրակոսի տեղեկության, «եթող
զայրոսն և գնաց ի Նաչն»¹⁰։

Ինչո՞ւ այդպիսի թողեց ու գնաց Կիրակոսի պատ-
մության մեջ պատճառը չկա։ Հովհաննես Ղրիմե-
ցին, չգիտես որտեղից՝ քաղելով, այդպիսի պատ-
ճառ է համարում Գրիգոր վարդապետի (որին նա
թյուրիմացաբար Տուտեորդի է համարում) «խաղ-
ապանքները»։ Իբր թե, «զգուշալ ի մախանաց Գրի-
գորի», Հովհաննեսը թողեց Հաղթատը և գնաց ոչ
թե Նաչն, այլ Սամահին, քանի որ Սամահնում
1205-ին պիտի քանդակեր հյուրատուն կառուցելու
մասին իր արձանագրությունը¹¹։

Սակայն, ամկախ նրանից, որ ոչ մի աղբյուր չի
հաղորդում Հովհաննեսի՝ Նաչն գնալու պատճառը,
Ղրիմեցու վարկածն սխալ է իր մանրամասներով։
Գրիգոր վարդապետը, ինչպես հետո կտեսնենք,
Հովհաննեսի եղբորորդին էր և ո'չ թե Տուտեորդին,
Հովհաննեսն իսկապես Նաչն գնաց և ո'չ թե Սա-
մահին։

Նաչնում Հովհաննեսը մնաց իր ոգուն ու կոչմա-
նը հարազատ. օգնեց հայրենի գավառի հոգևոր
մշակույթի զարգացմանը, բարեկարգեց Դադի վան-

քի ու խաթրավանքի թեմերը։ Այստեղ նա, հավա-
նաբար, մնաց միայն մի երեք-չորս տարի, քանի որ
1198-ին դեռևս Հաղթատում էր ու 1205-ին էլ Սա-
մահում պիտի լիներ ու պիտի արձանագրեր իր շի-
նարարական գործերը։ Եվ այս կարճ ժամանա-
կում նա կառուցում է խաթրավանքի կաթողիկեն,
նրա պատի վրա թողնելով (1204 թ.) մի արձանա-
գրություն, որով պատմում է, թե ինչպես կառուցեց
եկեղեցին, այնտեղ հավաքեց խաչեր, խաչքարեր,
ձեռագիր մատյաններ, տմկեց Ջորաց այգին, ապա
մատաղ մի այգի (մատաղիս)¹² ևս գցեց և այս բո-
լորը, Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի միջ-
նորդությամբ, համաձայն իր եղբայր Հասանին ու
նրա որդիներին։ Հասանն էլ մույն արձանագրու-
թյան տակ դրել է իր գիրը, պատմելով, որ երբ՝ իր
եղբայր Հովհաննեսը կառուցեց եկեղեցին ու վանքն
իրեն տվեց, ինքն էլ եկեղեցուն մկիրեց խնձորա-
բակը (երևի գյուղի անունն է, որ հիշվում է նաև
ուրիշ արձանագրություններում)¹³։

1205 թ. Հովհաննեսը մորից Սամահում էր։ Ոչ
միայն այնտեղ էր, այլև արդեն կառուցել էր վանքի
հյուրատունը, նրան մկիրելով Կոչածորի այգին և
«Ուտնագոմոց կեսն»։ Այս բոլորը պատմում է նրա
կանգնեցրած մի գեղեցիկ խաչքարի արձանագրու-
թյունը. «Ի թվականիս հայոց ի ՈՒՄ (1205), ի թա-
գաւորութեանս վրաց Թամարին, յամիրսպասապա-
րութեանս Զաքարի և Իւանի՝ եղբայրս հարազատաց,
որդեաց մեծին Սարգսի, ես՝ հայր Յովհաննես գաւա-
ռաւ Նաչնցի, եկեալ բնակեցաւ ընդ հովանաւս
սրբո Սատուածինս եւ շինեցի գհիրատունս վանս
փրկութեան հոգո իմ եւ արեւշատութեան տէրանց
մերոց Զաքարի եւ Իւանի, ետու ի հիրատունս

¹² Մ. Բարխուտարյանը (Արցախ, էջ 194), այս
արձանագրությունն ընդօրինակելով, «մատաղիս»-ն
ընդունել է որպես Վաղարհա գյուղի մոտ գտնված
(իր ժամանակ ավերակ) մի հին գյուղի անունը։

Առաջին անգամ Կարապետ եպիսկոպոսն է կա-
կածի տակ առել մեծան բացատրությունը, ենթադրե-
լով, որ, եթե մույն «մատաղիս» բառը կրկնվում է
նաև ուրիշ արձանագրություններում, ապա բառը
հասարակ անուն է. «մի արդյունաբեր տեղ է երևի
և ոչ թե այժմ ավերակ դարձած գյուղի անուն
(տե՛ս Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-
Օսմանագարյանք, Էջմիածին, 1914, էջ 56)։

Այսքանից հետո Թադ. Ավդալբեգյանը «մատա-
ղիս»-ը միանգամայն իրավացի բացատրել է որպես
մոր, ջահել այգի՝ «մատաղ» բառից, ինչպես որ
«Նորք»-ը՝ «մոր, մատաղ այգի» է նշանակել սկզբ-
նապես։ Մատաղիս և Նորքը հետագայում են դար-
ձել հատուկ անուններ (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Մի
գաղտնիք հայ վիմական արձանագրությունների
մեջ. Հայագիտական հետազոտություններ, Երևան,
1969, էջ 817)։

¹³ Այս արձանագրությունը՝ մի քարի վրա, այժմ
պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի ցու-
ցարանում։

արձանագրությունից երևաց, որ Հովհաննեսի ա-
ռաջնորդության օրոք Տուտեորդին վարդապետ էր
մույն վանքում։

⁶ Ղաֆադարյան, Սամահին, էջ 105—106։

⁷ Ղ. Ալիշան, Հայաստան, Վեներիկ, 1801, էջ
888, Գաբրիել կաթողիկոս, Յիշատակարանք ձե-
ռագրաց, Ա, էջ 591. «զրեցաւ գիրքս այս ի գաւա-
ռիս Զորոյգետ, ի վանքս Հաղթատ... յեպիսկոպո-
սութեան տեսուն Յովհաննիսի»։

⁸ Կիրակոս, էջ 216։

⁹ Ջալալեանց, Ա, էջ 80։

¹⁰ Կիրակոս, էջ 174։

¹¹ Ղրիմեցի, Պատմություն, էջ 154։

գնդաձորին այգին և զնուագոմսաց կենն եւ կանգնեցի զխաչս...»¹⁴:

Այս անգամ արդեն Հովհաննեսը Սանահանում երկար չի մնում, որովհետև տեղի է ունենում մի դեպք, որի շնորհիվ մա կրկին ձգանակվում է Հաղթատավանքի եպիսկոպոս:

Վրաց ու Հայոց զորքերի գերագույն հրամանատար Ջաքարեն գերագույն իշխանավորն էր դարձել մասն Հայաստանի ազատագրված մասնագների, իրեն համարում էր Հայոց թագավոր ու շահնշահ և ուզում էր ապրել թագավորավայել: Նա որոշել էր «շարժական» եկեղեցի ունենալ «ի պետս ճանապարհաց... տեղի պաշտաման և պատարագի»: Ջաքարեն խոստովանահայր Մխիթար Գոշը խորհուրդ է տալիս այդպիսի քաջ չանել ինքնակամ, այլ մախապես թույլտվություն խնդրել Հայոց կաթողիկոսից ու Հայկական Կիլիկիայի թագավոր Լևոնից: Ջաքարեն այդպես էլ անում է: Գալիս է թույլտվության գիրք, հետո էլ՝ եկեղեցական ծեսերի կատարման ութ մոր կանոններ: Ամիրապատալարն իր պտուղահատ Լոռե քաղաքում ժողովի է հրավիրում Արեվելյան Հայաստանի հոգևոր առաջնորդներին, որպեսզի նրանց համաձայնությամբ գործի դնի ստացված թույլտվությունն ու մոր կանոնները: Ժողովում պատակվում են հոգևոր հայրերը. «ոմանք հաւանեցան, և կէան ոչ»¹⁵: Ըմբոստ հոգևորականները բացահայտ կերպով ընդդիմանում են Ջաքարենի մախաձեռնությանը՝ ութ կանոնների մեջ տեսնելով քյուզանդական միջատության մի մոր դրսևորում (Գրիգոր Տղային նրանք իմն կանոններ էին առաջարկել):

Ըմբոսաների մեջ էր մասն Հաղթատի առաջնորդ Գրիգորը՝ Ջաքարենի քույր Դոփի որդին: Եկեղեցական մոր կանոնները Հաղթատում կիրառելու համար Ջաքարենի կողմից ուղարկված Միմաս եպիսկոպոսին ու նրա պաշտոնյաներին Գրիգորը քրածեծ անել է տալիս¹⁶:

Ջալալացի Ջաքարեն մահապատժով է ապառնում Գրիգորիսին: Սա փախչում է Կայեն գավառը, Մխիթար Գոշի մոտ, հուսալով, որ զորավարի խոստովանահայրն իրեն կիրկի վերահաս պատժից: Հետո Գրիգորին այստեղից էլ անցնում է Կեչառիս, որտեղ և Ջաքարենի մարդիկ բռնում ու կալանավորում են նրան:

Ջաքարեն Գրիգորիսի փոխարեն Հաղթատի առաջնորդ է ձգանակվում Հովհաննեսին:

Երբ է գումարվել Լոռեի ժողովը, որից հետո էլ կատարվել է Հովհաննեսի ձեռնադրությունը: Ժողովի հանգամանքների մասին խոսող Կիրակոսը

նրա գումարման տարին չի նշում: Այն պետք է պարզել օժանդակ փաստերի միջոցով: Հետագորտողները տարբեր տարեթվեր են ընդունում, առանց ասելու, թե ինչի՝ հիման վրա: Այսպես. Հովհաննես Դրիմեցին Լոռեի ժողովի տարի է համարում ՌԾԴ (1205) թվականը և սրան հաջորդած Անիի ժողովի տարի՝ ՌԾԵ (1206) թվականը¹⁷: Համազասպ Ոսկյանը ևս այն կարծիքին էր, թե Լոռեի ժողովը գումարվել է 1205-ին¹⁸: Ոսկյանի կարծիքով՝ Անիի ժողովն էլ գումարվել է 1207-ին¹⁹: Պրոֆ. Մելիքսեթ-բեկի կարծիքով՝ Լոռեի ժողովը գումարված պետք է լինի 1204—1205 թթ.²⁰: Կ. Ղաֆադարյանը համաձայն չէ մախորդների հետ և նշում է, թե «հաստատուն վկայություն ունենք այն մասին, որ... Հովհաննեսը վանքի (Հաղթատի.—Ու. Բ.) առաջնորդ է դարձել Լոռի (Լոռեի.—Ու. Բ.) 1208 թվականի ժողովից հետո»²¹: Սակայն, դժբախտաբար, գիտնականը չի նշում այն «հաստատված վկայությունը», որի համաձայն պետք է որ Լոռեի ժողովը գումարված լինի 1208-ին:

Անիի ժողովի գումարման տարեթիվը քննության առարկա հարցի համար անկարևոր համարելով, մենք պետք է ընդունենք, որ Լոռեի ժողովը տեղի է ունեցել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին, բայց երբեք 1208-ին:

Սրա համար կա արդեն շատ հաստատուն տեղեկություն. 1207 թվականին Հաղթատում, «ընդ հովանա Սրբոյ Նշանին» ընդօրինակվել է մի Աստվածաշունչ՝ «առաջնորդութեան սուրբ հայրապետիս մերոյ տեան Յոհանիսի, ի թուիս հայոց ՌԾԶ (1207)»²²: Այս նշանակում է՝ Լոռեի ժողովը պետք է տեղի ունեցած լինի 1207 թվականից առաջ, որպեսզի նրանից հետո Ջաքարեն «քվերորդի» Գրիգորիսին բանտարկեր, և նրա տեղ Հաղթատի առաջնորդ նշանակեր «քվերորդոս» հորեղբայր Հովհաննեսին, և այս Հովհաննեսն էլ գործի անցած լինի, որպեսզի գրիչը 1207-ին նրա անունը հիշեր որպես վանքի առաջնորդի:

Ուրեմն, Հովհաննես վարդապետը Հաղթատականքի առաջնորդ է դարձել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին:

Սրանից հետո Հովհաննեսը, որ արդեն պետք է առնվազն 65—70 տարեկան ծերունի լինի, կապվում է միայն Հաղթատի հետ: Այստեղ են անցնում նրա կյանքի վերջին քսան տարիները, որոնց թողած հիշատակների հիման վրա միայն հետագորտողները

¹⁷ Դրիմեցի, Պատմություն, էջ 86:

¹⁸ Լ. Ոսկյան, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1928, էջ 135:

¹⁹ Անդ, էջ 186:

²⁰ Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ, Երևան, 1938, էջ 80:

²¹ Ղաֆադարյան, Հաղթատ, Երևան, 1968, էջ 80:

²² Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 785: Սույն ձեռագրի մասին մանրամասնորեն տե՛ս Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, 1935, էջ 71 և հոդ.

¹⁴ Ղաֆադարյան, Սանահին, էջ 183—184:

Ջալալյանը (Ա, էջ 28) և Մետրոպ Մագիստրոսը (էջ 118) այս արձանագրության թվական են արտագրել ՌԶ (1157), որ չի համապատասխանում Թամարի թագավորության (1184—1213 թթ.) ժամանակին (տե՛ս Ղաֆադարյան, Սանահին, էջ 184):

¹⁵ Կիրակոս, էջ 172:

¹⁶ Անդ, էջ 178:

նրան կոչում են խոշոր շինարար ու մեծ երախտավոր:

Կիրակոսը նրա գործունեությունից առանձնացնում և մի հատուկ սքանչացումով է պատմում Հաղբատի վանքի մեծ գավթի շինարարությունը. «...բակեաց գավթին փորագրույն, որ ի դուռն կաթողիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն ճիացմամբ»²³:

Այսպէ՛ս «Եւ այր առաքինի էր Յովհաննէս, և բազում գործս յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհոշակաւոր գաւիթն եկեղեցոյն շինեաց, որ ճիացուցանէ զտեսողսն»²⁴:

Եվ, իսկապէս, միայն այս գավթը բավական էր, որպէսզի գավթը սերունդները երախտագիտությամբ ճիշտին նրա շինարարին:

Հետագոտողները, առանց բացառության, գտնում են, որ Հաղբատի մեծ գավթը հայ ճարտարապետության ամենախառնակոր կողողներից մեկն է, «իսկ գավթների ճարտարապետության մեջ՝ առաջինը»²⁵:

Երբ է կառուցվել այս հոյակերտը: Հետագոտողներն իրարամերձ պատասխաններ են տալիս այս հարցին: Կ. Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ «Գավթը հիմնված լինելով 1185 թ., այն հետագա մասնակի փոփոխություններից հետո ստանում է ներկայիս ձևը»²⁶: Ուսման գավթի կառուցման տարի են համարում 1201 թվականը²⁷: Կ. Ղաֆադարյանն էլ, մերժելով այս վարկածները, որոնք ակնհայտորեն սխալ են, քանի որ հսկայական են մատենագրական ու վիճագրական տվյալներին, հայտնում է հիշյալ կարծիքը. «...Մեծ ժամատան կառուցման սկիզբը պետք է համարել 1208 թվականը, Հովհաննէս Խաչենցու առաջնորդությամբ առաջին տարին, որովհետև երեք տարի հետո... այդ ժամատունն արդեն կառուցված էր առնվազն միմէջ մուտքի ճակատակալ քարը, որի վրա կա 1210 թվականի արձանագրություն, իսկ ժամատան ավարտման թվականը որոշելու առաջին ոչ մի հիմք չունենք, բայց գիտենք, որ 1210-ական թվականներից այն կողմը չի անցել: «Նշանակում է, Հաղբատի մեծ ժամատունը կառուցվել է... 1208-ից հետո, 1210-ական թվականներին...»²⁸:

Կ. Ղաֆադարյանի մոտ ժամատան կառուցման սկիզբը դրվում է 1208-ից հետո, որովհետև նրա

կարծիքով՝ Հովհաննէսը վանքի առաջնորդ է դարձել այդ թվականին: Սակայն տեսանք, որ այս հաշիվը ճիշտ չէ. Հովհաննէսի առաջնորդությունն սկսվում է առնվազն երկու տարի վաղ՝ 1206-ին:

Կարելի է առավել կոնկրետացնել նաև ավարտման ժամանակը, որ հասկացվում է 1210-ից հետո, ավելի ճիշտ՝ 1210-ականներին: Սակայն չէ՛ որ կա ճակատակալ քարի վրա, մուտքի կամարի տակի ամբողջ տարածությունն զբաղեցնող արձանագրությունը՝ քանդակված Զաքարեի ու Իվանի կողմից 1210 թվականին: Ուրեմն, 1210-ականներն էլ վերադասական պատկերացնել չի կարելի, քանի որ Զաքարեն մահացել է 1212-ին: Իսկ արձանագրությունը գրված է նրա ամուսնից:

Դժվար է պատկերացնել, թե շենքն անավարտ է եղել, երբ Զաքարեն ու Իվանեն նրա վրա դրել են իրենց 19 տողանոց արձանագրությունը: Հետևապէս չի կարելի մեծ գավթի ավարտման տարին 1210-ից հետո դնել: Ուրեմն կառուցումն սկսվել է 1206-ին, ավարտվել 1210-ին:

Այս առումով էլ ավելի հավանական ենք համարում Կ. Ղաֆադարյանի եզրադրությունն այն մասին, «որ ժամատան կառուցման արձանագրությունը դեռևս չգրված, Զաքարեի հրովարտական են հատկացրել նրա (գավթի.—Ու. Բ.) պատվովոր տեղը»²⁹:

Սա միանգամայն հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք, որ Զաքարեն ու Իվանեն էին Հաղբատի ու շրջակայքի պատրուկները, գավթը կառուցող Հովհաննէսի սաներն ու հովանավորները:

Հովհաննէսի գործունեության այս վերջին կամ Հաղբատյան շրջանը լի է մշակութային մի շարք երեւոյթների: Նրա օրոք՝ և նրա գլխավորությամբ վանքը շարունակում էր կատարել գրչական խոշոր կենտրոնի իր դերը:

Այստեղ, հենց այս տարիներին ստեղծվում են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մեզ հասած օրինակներն աչքի են ընկնում գրչական ու մանրանկարչական բացառիկ արժանիքներով: Այս տեսակետից եզակի երևույթ է «Գեոտաշենի» անվամբ հայտնի այն Ավետարանը, որ 1211 թ. «ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ, յառաջնորդութեան տեսան Յոհաննիսի սրբաւիրի»³⁰: Մի այլ ձեռագիր՝ Տոնապատճառ, ստեղծվել է «ի թուականութեանս հայոց ՈԿԷ (1218) և ի հայրապետութեան սուրբ ուխտիս Հաղբատայ տեսան Յովհաննիսի հեզի և առաքինոյ և (ի) սպարապետութեանս

²³ Կիրակոս, էջ 98:

²⁴ Կիրակոս, էջ 174:

²⁵ Գաբեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, էջ 66:

²⁶ Կ. Լ. Հովհաննիսյան, XII—XIX դարերի հայկական ճարտարապետությունը. Աննարի հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 288:

²⁷ В. Арутюнян, В. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 57:

²⁸ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 32:

²⁹ Անդ:

³⁰ Մատենադարանի ձեռ. № 6288, ր. 848բ: Ձեռագրիս նկարագրությունը տե՛ս Արցախ, էջ 282—283, ընդարձակ ու համազամանից քննությունը՝ Գաբեգին Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց (Գեոտաշենի Ավետարանը). Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, էջ 41—75:

Հաղոց և Վրաց Իւանէի և մանկանն Ծահմառի...»³¹: 1220-ին ընդօրինակված մի ձեռագրի գրիչ խնդրում է՝ «Գտեր Յովհաննէս զարեւելիսկոպոս... ի իշխանիք յաղաթս ձեր»³²:

Հովհաննէս եպիսկոպոսի այս տարիների վաստակի մեջ պետք է մտցնել նաև նրա վաճառական գործունեության մի ուրիշ կողմը. երբ նրա գործուն միջամտությամբ Հաղբատում շինարարական ու վերանորոգչական հսկայական աշխատանք են կատարում և վաճառի մեծամեծ ընծաներ տալիս ժամանակի մեծատոմսները՝ Տփղիսի հայ իշխանավորներից սկսած մինչև Վաչուտյանց և Ուքանյանց տոհմերի պապագատները³³, մինչև իր հայրենի Խաչենի իշխաններն ու իշխանուհիները³⁴: Եվ իզուր չէ, որ վերջիններս իրենց արձանագրությունների մեջ Հովհաննէսի անունը հիշում էին մի անգամահատուն երախտագիտությամբ՝ ոչ միայն որպես վաճառորդ։ Այսպես, ո՞ւմ Հովսեփ, որ Հաղբատում ՈՄԸ (1209) թ. խաչքար է կանգնեցրել «Յառաջնորդութեամբ տէր Յովհաննիսի և ի տէրութեան Զաքարէի և Իվանէի», խնդրում է հիշել նշված անունները և՛ «ես առաւել զՅովհաննէս»³⁵:

Սակայն այսպես թե այնպես Հովհաննէս Ա-ը հայտնի է որպես եռանդուն շինարար և դժվար է պատկերացնել, թե նա հանգիստ պիտի նստեր Հաղբատի մեծ տաճարին կից գավթի կառուցումից հետո։ Պահպանված արձանագրությունները պատմում են, որ 1211 թվականին նորոգել է վանքի՝ 1025 թվականին կառուցված սուրբ Գրիգոր եկեղեցին։ Այդ եկեղեցու ճակատին, մուտքից վերև՝ նորոգմանը նվիրված արձանագրությունն է. «թվին ՈՎ (1211) նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յովհաննիսի եւ միաբան եղբարցաւ։ Ապա նորոգումը հիշատակվում է Հովհաննիսի 1221 թ. գրած, իր գործերն ընդհանրացնող արձանագրության մեջ։ Ա. Գրիգոր եկեղեցու վերանորոգումը, ըստ երևույթին, վերակառուցման պես մի բան է եղել, եթե, ինչպես Կ. Ղաֆադարյանն է իրավացի կերպով ենթադրում, նորոգման հետ միասին, եկեղեցուն ավելացվել են ներքին ա-վանդատները։ Այլապես Հովհաննէս եպիսկոպոսն իր գլխավոր արձանագրության մեջ, մեծ գավթի

կառուցման կողքին չէր հիշի փոքրածավալ մի գործ»³⁶:

1214 թ. Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի մահից հետո, նրա կնոջ նախաձեռնությամբ սկսվում է Վերին Խաչենի առաքելադիր Դադի վանքի մեծ եկեղեցու կամ կաթողիկեի կառուցումը։ Հետագո-տողների կողմից արդեն նկատվել է, որ այս շենքի մեջ իրենց կիրառությունն են գտել Հաղբատի ա. Նշան եկեղեցու ճարտարապետական վսեմ արժանիքները։ Մեարոպ Մագիստրոսն այս մասին խոսելիս հաստատում է, որ Հովհաննէս Խաչենեցին, Հաղբատում իր կառուցած մեծ ժամատան մեջ իրա-կանացնելով Դադի վանքի հին քաղիլիկի ճարտա-րապետական որոշ տարրերը³⁷, հետո էլ Հաղբատի կաթողիկեի փորձն է կիրառել Արգու-խաթունի կա-ռուցած եկեղեցու մեջ՝ Դադի վանքում։ «Ծառ հա-վանական ենթադրությամբ կարելի է ընդունել,— գրել է Մեարոպ Մագիստրոսը,— որ Հաղբատի վան-քի հռչակավոր շինարար առաջնորդ խաչենցի Հովհաննէս եպիսկոպոսը, ազգական իշխանացն Խա-չենո, հետևապես և Արգու-Խաթունի, սրա գլխավոր խորհրդատուն էր եկեղեցու շինության ղեկավար և նրա առաջարկով Դադի վանքի կաթողիկեին Սուրբ Խաչ կամ սուրբ Նշան անունը տվել, հետևողու-թյամբ Հաղբատի սուրբ Նշանին»³⁸:

1221 թ. Հովհաննէս եպիսկոպոսն իր կառուցած մեծ գավթի ներսում, արևելյան պատի վրա, քան-դակել է մի արձանագրություն, որով թվարկում է Հաղբատավանքի համար կատարած իր հիմնական գործերը։ Այստեղ համեստ երախտավորը, հավա-նաբար խոր ծերության հասած, ինչպես իր հայրենի Խաչենում են ասում, ոտքի մեկն արդեն գերեզմա-նում, ասես հաշիվ էր տալիս իր խոճի ու գավթի առաջ. «Յամս աստուածագար թագաւորացս Թա-մարա եւ որդո իւրո Գեորգէ եւ Բ (2) հարազատաց՝ Զաքարէի եւ Իւանէի, հրամանաւ սոցա կոչեցա յե-պիսկոպոսութիւն սբ աթոռոյս Հաղբատա ես՝ Յո-հաննէս ի Խաչենո։ Ներողութեամբ Այ կացեալ իմ ամս քազում յառաջնորդութեանս, սպասաւորեցի արքոցս ի շինութիւն եւ յառաջիկութիւն տանս Այ նախ՝ ի ձեռն շինուածոց ի սբ Նշանս, ի մատենս, ի սպաս զարդոց, զկաթողիկէս ապել եւ զդուռնս կազմել, զսբ Գրիգորն նորոգել, զգաւթոս շինել, զգաւթի սբ սեղանոյն եւ ԳԳ (3) սբ Աշանս։ Եւ իմ խնդիր է ի միաբանացս՝ զսբ Յակոբա տաւնի կիրա-կէն իմ սբ Նշանացս տաւն կատարեն և զպատարագ ատուրն ինձ մատուցանեն յամեն եկեղեցիս... Ո՛հ (1221)»³⁹:

Հայտնի չէ, թե ե՞րբ է մահացել Հովհաննէս Ա Խաչենեցին։ Հետագոտողները 1221-ի արձանագրու-թյունից հետո նրա և հաջորդի՝ Հովհաննէս Բ-ի անունները խառնված են համարում։ Սակայն նկատի

³¹ «Բագմամվէյ», 1887, էջ 107—108, Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 821ա։ Գարեգին կա-թողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 795:

³² Մատենադարանի ձեռ. № 1912, թ. 228ա։ Գարեգին կաթողիկոսը համահիմ այս արհեստիկոպոս Հովհաննիսի ենթադրում էր, որ Ա-ի հաջորդն էր և նրա եղբորորդին։ Սակայն քիչ հետո կտեսնենք, որ ոչ միայն 1220-ին, այլև առնվազն մինչև 1225 թ. Հովհաննէս Ա-ն էր Հաղբատի առաջնորդը։ Հետևա-պես, ձեռագրում հիշվող Հովհաննէս արհեստիկոպո-սը նույն ինքն է՝ Հովհաննէս Ա-ն է եղել:

³³ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 172—174, 280—281 նմ:

³⁴ Կիրակոս, էջ 215—216:

³⁵ Ղրիմեցի, Պատմություն, էջ 82:

³⁶ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 80:

³⁷ Մեարոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկա-կան երեք մեծ վանքեր, էջ 134:

³⁸ Ամր, էջ 88:

³⁹ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 180:

առնելով, որ Հաղթատում իսկապես նրան ամսիջապես հաջորդել է իր եղբորորդի Հովհաննեսը, որը միաժամանակ քվերորդին էր Ջաքարեի ու իվա-ների⁴⁰, Հաղթատից առաջ էլ Սանահինի առաջնորդ եղած, կարելի է առաջինի մահվան տարին մոտավորապես որոշել նրանով, թե երկրորդը մինչև ե՞րբ է մնացել Սանահինում: Հովհաննես Բ-ը Սանահինում էր մինչև 1225-ը հաստատուպես: Նա 1225 թվականից այնտեղ ունի արձանագրություն, որով հայտնում է, որ «ի թվի ՈՀԴ» (1225) մատուռ է կառուցել⁴¹: Այս Հովհաննեսին Սանահինում ամսիջապես հաջորդած Գրիգոր եպիսկոպոսին վերաբերող առաջին արձանագրությունն էլ 1229-ից է⁴²: Նշանակում է՝ Հովհաննես Բ-ը Սանահինից Հաղթատ է տեղափոխվել 1225—1229 թվականների միջև, և հենց այս ժամանակ էլ մահացած է եղել Հովհաննես Ա-ը:

Ստուգապես հայտնի չէ Հովհաննես Խաչենեցու գերեզմանի տեղը: Հայտնի չէ՝ նրա վրա քաշե՞լ են տապանաքար, թողե՞լ են տապանագիր⁴³: Ինքը

կենդանության օրերում, ամենատանքունը եռանդավորների մեջ և համեստագույնը համեստներից, դասակիցներին խնդրում էր հիշել մայր և առաջ իր կատուցածները, իր խաչարձաններն ու հավաքած մատյանները. «Իմ խնդիր է միաբանացս՝ զսուրբ Յակոբայ տօնի կիրակե՛ն իմ տուրք Նշանացս տա՛ն կատարե՛ն»:

Իսկ այդ կատուցածներն ու նորոգածները, կանգնեցրած խաչարձաններն ու հավաքած մատյաններն այնքան շատ են, որ պարզապես թվում են անհնար՝ սովորական մի կյանքի համար: Բավական է, թեև կուգ, հիշել ամենակարևորները՝ Սանահինի Ամենափրկիչ եկեղեցին՝ գավթով հանդերձ, Խաթրավանքի գլխավոր տաճարը, Հաղթատի մեծ ժամատունը, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ բավական կլիներ գալիք սերունդների խորին երախտագիտությունը նվաճելու համար:

(Ծարունակելի)

⁴⁰ Կիրակոս, էջ 99: «Եւ յետ նորա (Յովհաննիսի) Խաչենեցոյ միւս Յովհաննէս՝ քուերորդի իշխանացն Ջաքարէի և Իւանէի և եղբորորդի առաջնոյ Յովհաննիսին»:

⁴¹ Ղաֆադարյան, Սանահին, էջ 170:

⁴² Անդ, էջ 180:

⁴³ Ռ. Երզնկյանը Հաղթատում գտնված մի խաչարձանի ճակատին կարդացել է. «Այս է հանգիստ տր Յոհաննիսի»: Հետազոտողն այս խաչարձանը համարել է Հովհաննես Խաչենեցու տապանաքարը (տե՛ս նրա՝ Հնախօսական տեղագրութիւն Հաղթատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1886, էջ 84): Եվ Գարեգին Հովսեփյանն

էլ, դա համարելով անքննելի ճշմարտություն, ալեւացրել է. «Նա թաղված է Գևորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան յուր գեղարվեստաներ ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի ալելի մեծ խաչարձան կանգնած...» (տե՛ս նրա՝ Հաղթատի դպրոցի մի գլուխ-գործոց, էջ 87): Սակայն, դժբախտաբար, ոչ Երզնկյանը, և ոչ էլ՝ մնաց ղեկավարում բժախնդիր Գարեգին Հովսեփյանը չեն ասում, թե իրենք ինչպես են Հաղթատի առաջնորդ եղած մի շարք Հովհաննեսներից Հովհաննես Ա-ին տալիս հիշյալ տապանաքարը, մանավանդ, երբ նրա վրայի գրի մեջ բացակայում է այդ Հովհաննեսին երկրորդ անվան պես կպած «Խաչենեցի» տարբերակիչը:

